



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ԽԱՉԿԵՐԱՅԷՆ ԵՏԲ ՈՒԹԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

08 ՆՈՅԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Վերականգնումի համար	էջ 2
Ծանուցում	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(24.1-14)

Ահա Տէրը պիտի կործանէ եւ աւերէ ամբողջ աշխարհը, տակնուվրայ պիտի ընէ աշխարհը եւ պիտի ցրուէ անոր բնակիչները: Ա՛լ կարելի պիտի չըլլայ զանազանել ո՛րն է աշխարհականը եւ որը՝ քահանան, ո՛վ է ծառան եւ ով՛ տէրը, կամ ո՛վ է աղախինը եւ ով՛ տիկինը, ո՛վ է գնողը եւ ով՛ ծախողը, ո՛վ է փոխ տուողը եւ ով՛ փոխ առնողը, ո՛վ է պարտատէրը եւ ով՛ պարտապանը: Երկիրը ամբողջութեամբ պիտի կործանի, պիտի յափշտակուի եւ աւարուի, - ահա Տէրը ինք այս բաները կը յայտարարէ.- Երկիրը իր կործանումը կը սգայ, աշխարհը՝ իր կործանումն ու աւերը. աշխարհի ղեկավարները նոյնպէս կը սգան, որովհետեւ աշխարհը անօրէն մարդոցմով լեցուեցաւ, որոնք Տիրոջ Օրէնքը ոտնակոխ ըրին, անոր պատուիրանները փոխեցին եւ անոր հետ կնքուած յաւիտեանական Ուխտը չյարգեցին: Այդ իսկ պատճառով Աստուծոյ նզովքը պիտի հարուածէ երկիրը, որովհետեւ անոր բնակիչները մեղանչեցին. մարդիկ թշուառութեան պիտի մատնուին, եւ շատ քիչ պիտի ըլլան հարուածէն ազատածները: Գինին խմող պիտի չունենայ, այգին՝ քաղող, խրախճանքը հառաչանքի պիտի փոխուի, ուրախ թմբուկները պիտի լռեն, անբարիչտներու սնապարծութիւնն ու հարստութիւնը վերջ պիտի գտնեն, քնարներու ձայնը պիտի դադրի: Մարդիկ ամօթով պիտի մնան, գինին պիտի չկարենայ գիրենք ուրախացնել, եւ օղին լեղի պիտի թուի խմողներուն: Ահա բոլոր քաղաքները աւերուեցան, տուներու դռները փակ մնացին, որովհետեւ ներս մտնող չկայ: Ամենուրեք գինիի փոխարէն ողբ կայ, ցնծութեան

ձայները լռեցին, ուրախութիւնը մարդոցմէ փախաւ: Քաղաքները ամայացան, տուները լքուած մնալէն կործանեցան: Այո՛, Տէրը այսպէս պիտի վարուի աշխարհի բոլոր ժողովուրդներուն հետ. ինչպէս մարդիկ ձիթենին կը թօթուեն, այնպէս Տէրը պիտի թօթուէ գիրենք, եւ իրենցմէ ինկածները պիտի աղաղակեն ու ողբան: Բայց երկրի վրայ մնացողները միասնաբար պիտի ուրախանան Տիրոջ փառքով:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՓԵՍՍՈՍԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(5.15-33)

Հետեւաբար ձեր ապրելակերպին ուշադրութիւն ըրէք: Մի՛ ապրիք անմտօրէն, այլ իմաստուններու պէս: Օգտագործեցէ՛ք ժամանակը, որովհետեւ այս օրերը չար են: Ուստի անմտութիւն մի՛ ընէք. հասկցէք թէ ի՛նչ կ'ուզէ Տէրը ձեզմէ: Գերին մի՛ դառնաք գինիին որ անառակութեան կը տանի. այլ մասնաւորաբար Սուրբ Հոգիով լեցուեցէ՛ք, իրարու հետ սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով խօսեցէ՛ք, եւ ձեր սիրտերուն մէջ միշտ երգեցէ՛ք ու սաղմոս ըսէ՛ք Տիրոջ: Տեւաբար, ամէն բանի համար շնորհակալութիւն յայտնեցէ՛ք Հօր Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով:

Քրիստոսի հանդէպ ձեր պատկառանքը արտայայտեցէ՛ք՝ իրարու հնազանդելով: Կինե՛ր, հնազանդեցէ՛ք ձեր ամուսիններուն, ինչպէս Տիրոջ պիտի հնազանդէիք. որովհետեւ ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս ինչպէս Քրիստոս գլուխն է եկեղեցիին՝ իր մարմնին, որուն փրկիչն է ինք: Հետեւաբար, ինչպէս եկեղեցին Քրիստոսի կը հնազանդի, այնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց ամուսիններուն թող հնազանդին:

Քրիստոսի
հանդէպ ձեր
պատկառանքը
արտայայտեցէ՛ք՝
իրարու
հնազանդելով:

Այրե՛ր, սիրեցէ՛ք ձեր կիները այնպէս՝ ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր կեանքը տուաւ անոր համար, որպէսզի ջուրի լուսացումով զայն մաքրէ եւ իր խօսքով սրբէ, այնպէս մը՝ որ եկեղեցին իրեն ներկայանայ ամբողջական փառքով, առանց որեւէ արատի կամ խորշոմի կամ ուրիշ թերութեան, այլ ըլլայ սուրբ եւ անարատ: Ծիշդ նոյն ձեւով ամուսիններ պարտին իրենց կիները սիրել որպէս իրենց մարմինը. որովհետեւ իր կիներ սիրողը ինքզինք սիրած կ'ըլլայ, եւ չկայ մէկը որ ինքզինք ատէ. ամէն մարդ ալ կը սնուցանէ եւ կը խնամէ իր մարմինը, ինչպէս Քրիստոս կը սնուցանէ ու կը խնամէ եկեղեցին՝ իր մարմինը, որուն անդամներն ենք բոլորս, անոր մարմինէն ու ոսկորներէն: Սուրբ Գիրքին մէջ գրուած է. «Ահա այս պատճառով այրը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»: Մեծ խորհուրդ մը ունի իր մէջ այս խօսքը, որ ես Քրիստոսի եւ եկեղեցիին համար ըստուած կը կարծեմ: Բայց նոյնը կը վերաբերի նաեւ ձեզմէ իւրաքանչիւրին, որովհետեւ իւրաքանչիւր այր պէտք է իր կիներ սիրէ իր անձին պէս, եւ ամէն կին պէտք է յարգէ իր ամուսինը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(8.49-57)

Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ իրեն ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւս մի՛ յոգնեցներ վարդապետը»: Յիսուս ասիկա լսելով, ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախնար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ, չձգեց որ ոեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտունողները բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լաք. աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ»: Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ գիտէին որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ փոքրիկ, ոտքի՛ ել»: Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց որ ուտելիք տան աղջկան, մինչ ծնողքը ապշահար եղած էր: Յիսուս անոնց պատուիրեց որ պատահածին մասին ոեւէ մէկուն բան չըսեն:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՀԱՄԱՐ

ԳՒՌՆԻԿ Ք.Գ.

«...կալաւ գձեռանէ նորա,
բարբառեցաւ եւ ասէ.
Արի, կաց, մանուկ դու:
Եւ դարձաւ ոգի նորա,
եւ կանգնեցաւ վաղվադակի»,
Ղկ 8.54-56:

Խնայվերացի տօնին ութերորդ Կիրակի օրուան Ս. Գրային ընթերցումները (Ես 24.1-14, Եփ 5.15-33, Ղկ 8.49-57), ինչպէս այլ բազմաթիւ Կիրակիներու եւ առիթներու ընթերցումները մեզ շփոթի կրնան մատնել: Եւ հարց կու տանք, թէ ի՞նչ է զանոնք իրարու քով բերած/բերող հիմնական մտածումը:

Նախ, ի՞նչ կ'ըսեն Ես 24.1-14-ը, Եփ 5.15-33-ը եւ Ղկ 8.49-57-ը:

Առաջին ընթերցումը:

Հատուածը մէկ մասն է «Եսայիի Յայտնութիւն» կոչուած բաժնին, որ 24.1-27.13 կ'երկարի: Այս չորս գլուխներուն մէջ կը յայտարարուի «ամբողջ աշխարհ»ին գալիք կործանումը, «անոր բնակիչներ»ուն ցրումը, գերբնական թշնամիին անկումը, նաեւ մահուան յաւիտենական բնաջնջումը, ու իրեն յուսացողներուն փրկութիւնն ու յաղթանակը:

Մեր հատուածին մէջ նիւթը կը վերաբերի «ամբողջ աշխարհ»ի կործանումին, անոր սուգին, մեղաւորներու կորստեան, իսկ երկրի վրայ մնացողներուն՝ «Տիրոջ փառքով» ուրախութեան:

Երկրորդ ընթերցումը:

Եփեսացիներուն ուղղուած նամակը կարճ է եւ կը բովանդակէ անհատական, ամուսնական, ընտանեկան եւ ընկերային յորդորներ:

Եփ 5.15-33-ը հետաքրքրականօրէն երկու տեսակի յորդորներ կ'ընդգրկէ. անհատ քրիստոնեային ուղղուած, ու կիներուն եւ այրերուն ուղղուած:

«Հետաքրքրական» բնորոշեցի հատուածը՝ որովհետեւ իրարու կ'ազուցէ անհատական եւ ամուսնական կեանքին վերաբերող յորդորներ, զանոնք մէկ տանիքի տակ կ'առնէ. որ ըսել է, թէ անոնց անջատ նշանակութեան անգին՝ ուրիշ նշանակութեան մը կը ձգտի, ուրիշ նշանակութիւն մը կը թելադրէ:

Երրորդ ընթերցումը:

Հատուածը կը գտնուի հրաշագործութեան դրուագներու խումբի մը մէջ, եւ վերջինն է: Այս ընթերցումով կը տեսնենք Յայրոս անուն ժողովրդապետի աղջկան հոգեդարձը եւ ոտքի կանգիլը:

Հիմա որ անջատաբար տեսանք հատուածները: Ինչպէ՞ս կարելի է հասկնալ ասոնց քով քովի դրուած ըլլալը, կամ համակեցուծիւնը, եթէ կարելի է ըսել:

1.- Ինչո՞ւ համար Եսայի մարգարէէն ընթերցումին մէջ Տէրը կը յայտարարէ «ամբողջ աշխարհ»ին կործանումը:

Կը կարդանք. «աշխարհը անօրէն մարդոցմով լեցուեցաւ, որոնք Տիրոջ Օրէնքը ոտնակոխ ըրին, անոր պատուիրանները փոխեցին եւ անոր հետ կնքուած յաւիտենական Ուխտը չյարգեցին (Ես 24.5):

Գիտենք, որ Տիրոջ Օրէնքը տրուած էր եբրայեցիներուն՝ Մովսէս մարգարէի միջոցով, եւ անոնց հետ է, որ Աստուած «յաւիտենական Ուխտ» կնքած էր: Քանի այդպէս է իրականութիւնը, ինչո՞ւ համար կ'ըսէ. «աշխարհը անօրէն մարդոցմով լեցուեցաւ»: Ո՞ր աշխարհին մասին կը խօսի: Տիրոջ Օրէնքը ստացող ժողովուրդը աշխարհը էր լեցնելու, այլ աշխարհին շատ փոքրիկ մէկ հողաշերտը:

Երբ կը բանանք մարգարէութեան սկզբնաւորութիւնը այնտեղ կը տեսնենք, թէ Աստուած «իր ժողովուրդ»ը կը յանդիմանէ, որովհետեւ «Յակոբի տուն»ը կամ երկիրը անօրէնութեամբ է լեցուած:

Հետեւաբար, «աշխարհ»ը որուն մասին կը խօսուի, «Յակոբի տուն»ն է, այսինքն Յուդայի շրջանը իր Երուսաղէմ քաղաքով (տե՛ս Ես 3.8):

Ասիկա անշուշտ առարկայական բացատրութիւնն է: Կայ նաեւ վախճանաբանական բացատրութիւնը, որ առարկայականը կը տեսնէ իբր նախօրինակ համայն մարդկութեան վախճանական դատաստանին:

Աստուծոյ յայտարարութիւնը սոսկալի է, արդարեւ: Իսկ Օրէնքին ոտնակոխութեամբ, «յաւիտենական Ուխտը» չյարգելը: Սոսկալի ե՞ն, թէ չեն:

Օրէնքին սիրտն են Տասնաբանեայ պատուիրանները: Անոնք խիստ են: Սակայն անոնք մարդուն կործանումը չեն ուզեր, այլ կործանումը կանխելու կը ծառայեն: Իսկ եթէ մարդը զԱստուած կը մերժէ, իր ձեռագործը կ'աստուածացնէ կամ ձեռագործներ իբր աստուածներ կը պաշտէ, Աստուծոյ անունը պարապ տեղ բերանը կ'առնէ, եօթներորդ օրը իր հոգեւոր կեանքին չի յատկացներ, իր հայրն ու մայրը չի յարգեր, կը սպաննէ, կը շնայ, կը գողնայ, սուտ վկայութիւնը կ'ընէ, ուրիշի ունեցածին կը ցանկայ՝ այն ատեն ինք իր կամակորութեամբ սոսկալին իր գլխուն բերած կ'ըլլայ:

Աստուծոյ բերնով ըսուած կործանելու յայտարարութիւնները բառացիօրէն պէտք չէ առնել, այլ պէտք է հասկնալ որպէս փոխաբերութիւններ գալիք կործանման բացարձակ նկարագրին, եւ պատգամ ուղիղ ընթացքի:

2.- Եփեսացիներու նամակին երկու տարբեր հասցէներով յորդորները ինչո՞ւ կը միանան իրարու: Զանոնք զօրոգը ի՞նչ է:

Հասկնալ Տիրոջ կամքը:

Իսկ ի՞նչ կը նշանակէ հասկնալ Տիրոջ կամքը:

Հատուածին համաձայն՝

- Ապրելակերպին ուշադրութիւն ընել.

- Իմաստուններու պէս ապրիլ.

- Օգտագործել ժամանակը.

- Ս. Հոգիով լեցուել, այսինքն՝ Աստուծոյ հետ միշտ աղօթական կապի մէջ ըլլալ:

Ըստ Պօղոս առաքեալի, կինը խորհրդանշանն է եկեղեցւոյ եւ այրը խորհրդանշանն է Քրիստոսի: Ուրեմն, եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամը որ Տիրոջ կամքը կ'ուզէ հասկնալ, նախ եւ առաջ կոչուած է Անոր կամքին հնազանդ ըլլալու: Ո՞վ է Տիրոջ կամքին հնազանդ մարդը:

ա.- Ան՝ որուն միտքը մարմնականին չէ կառչած, քանզի մարմնականին կառչած միտքը «Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ոչ ալ կրնայ հնազանդիլ» (Հռ 8.7):

բ.- Ան՝ որ Աստուծոյ Հոգիով կ'առաջնորդուի (նոյն, հմր 14):

գ.- Ան՝ որ զԱստուած իբր Աբբա կամ Հայր կը խոստովանի (նոյն, հմր 15):

դ.- Ան՝ որ Քրիստոսի չարչարանքներուն մասնակից է (նոյն, հմր 17):

3.- Ղուկասի դրուագին մէջ ուշադրաւ երեք տարրեր կան.

ա.- Յիսուսի կոչը չվախնալու, այլ հաւատալու:

բ.- Ծաղրողներուն տունէն դուրս դուրսելը: Եւ

գ.- Մեռած աղջկան վերակենդանացումը:

Այս տարրերէն առաջինը կը վերաբերի անոնց՝ որոնք Եսայի մարգարէի ակնարկած «երկրի վրայ մնացողները» պիտի ըլլան, այսինքն՝ Տիրոջ փառքին մասնակիցները:

Երկրորդը կը վերաբերի անոնց՝ որոնք Եսայի մարգարէի ակնարկած ինկողներէն կամ կործանածներէն պիտի ըլլան:

Երրորդը կը վերաբերի անոնց՝ որոնք անօրէն մարդոց ենթարկուելով՝ «մեռած»ներու պէս էին, բայց որոնք պիտի փրկուին ամբողջական աղէտէն: Ասոնք նոյն «երկրի վրայ մնացողներ»ն են:

Յիսուսի ձայնը յաւիտենապէս կը բնաջնջէ մահը:

Յիսուսի ձեռքը կը ժողովէ Աբբայի ժողովուրդին մնացորդը:

Յայրոսի աղջիկը այն ժողովուրդն է:

Եւ աղջիկը ահա ոտքի է կանգնած: Տե՛ս:



30-ԱՄԵԿ
Ս. ՅԱԿՈԲԻ ԿՐԻԱԿԱՏՐԵԱՅ
ԿՐԹԱՐԱՆԻՆ

ՀՈՎԱՆԱԽՐՈՒԹԵԱՐ՝
ԳՐԸ. Տ. ԽԱԺԱԿ Ս. ԱՐԲ.
ՅԱԿՈԲԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ՝
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵԱԻՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԹԷՅԱՍԵՂԱՆ

ԲԱՆԱԽՕՍ՝
ՀԳՐ. Տ. ԳԵՂԱՐԻ ՎՐԻ.
ՔՐԻՍՏՈՒԿԵԱՆ

(ԹԵԱԻՆ ՔՐԻՍՏՈՒԿԵԱՆ
ԴԵԱՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԻԻ ՎԱՐԻՉ)

ԵՐԹ՝
ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ
ԴԵԱՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՅԻ՝
ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ Ա. ԱՇԱՐՈՒԵԱՆ
ԱՐԱՀ


ԹՈՒԿԱՆ ԵՒ ԺԱՄ՝
ՀԱՔԲԱԹ, 21 ՆՈՅԵՄԲԵՐ 2009-Ի
ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 7.00-ԻՆ

ՏԵԴԵՐԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՀԱՃԵՑԷՔ ՀԵՌԱՋԱՅՆԵԼ
ՀԵՏԵԻԵՂ ԹԻԻՆ
514 331 5445 x202

ԼՈՅՍ ՏԵԱՒ

«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻՒ 6

ARAM I
DIALOGUE WITH THE YOUTH



DIALOGUE AVEC LES JEUNES

Traduction française par
Daniel Racine

MONTREAL 2009

ՀԱՄԱՍՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ՝
ՁՐԻ ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԿՐ ԽՆԴՐՈՒԻ ԱՆՁԱՐ ԵՐԿԱՅԱՆԱԼ
ԵԿԵԴԵՅՈՅԱ ԳՐԱՏԵՆԵԱԿ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ
ԱՌՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԱԽՕՐՔ
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵԴԵՅՈՅ ԴԻԲԱՆԱՏՈՒՄ

ՆԱԽՈՐԴ ԹԻՒԵՐԸ ԿՐՆԱՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԷԶԻՆ ՎՐԱՅ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿՐ Ե-ՆԱՄԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԵՆ ՈՐԴՈՂԱՐԿԵՅԷՔ
eglise58@sourphagop.com-ԻՆ